



Ֆ. ԲՈՌՋԱՆՅԱՆ

**ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱԶԱՆՅԱՆԻ ԱԶԳԱԴԱՎԱՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ¹**

W-J ամուկում տպագրված հաղորդումներից երևում է, որ վերջերս հայ կաթոլիկ կարդինալ Աղաչանյանը վրդովեցուցիչ և լույսեր է ունենում մեր Հայրենիքի և Մարտ Աթոռ Սուրբ էջմիածնի ցեմ: Ես հայ կաթողիկ հավատացյալ եմ, մեծացել և դաստիարակվել եմ կաթոլիկ հայրենասեր շըրջապատում և իր այդպիսին, նողկանքով եմ ընդունում հայ կաթոլիկ կարդինալի հայրենադավ հակաքրիստոնեական ելույթները, ես հավատացած եմ, որ հայ կաթողիկ է հասարակության հազարավոր ալ անդամներ ես, ինձ նման չեն բաժանում. նորելով կարդինալի հայրենադավ գաղափարները: Մենք մեր անցած պատմական կենափորձի հիման վրա դատապարտում ենք հրապարակով Աղաչանյանի ողջ ազգակործան գործունեությունը:

Ես հայ կաթոլիկ եմ, սիրում եմ իմ Հայրենիքն ու իմ հարազատ ժողովուրդը: Հայ կաթողիկե հասարակությունը ևս իր խորությունը հայրենասեր է. նա մեծացել է Մխիթարյան Սեբաստացու, Արսեն Բագրատունու, Ալիշանի, Մկրտիչ Պետիկթազյանի հայրենասիրական շնչով և ազգային տրադիցիաներով: Մենք՝ հայ կաթոլիկներս, սրտի ինչպիսի հուզմունքով երգում էինք ման-

1. Հոդվածագիր Ֆ. Բուշանյանն առանձին նամակով դիմել է մեր խմբագրությանը, խնդրելով թույլ տալ ամսագրում տեղալորեն իր ներկա հոդվածը հմագրությունը տալիս է նրան այդ հնարավորությունը, սակայն, միաժամանակ, անհրաժեշտ է գտել որոշ վիրավորական որակուներ և սուր արտահայտություններ հայրադավակ կարդինալի հասցեին, գրական էտիկակից ենելով, կրթատել — և ՄԹ.:

կության օրերին հայ ժողովրդի միության սրտառուլ երգը».

«... Տուր ինձ քո ձեռն, եղբայր եմք մեք,
Որ մրրկաւ էինք զատուած...
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն...»:

Մեր կարդինալներն ու գերապայծառներն են եղել, որ միշտ իրենց նեղ եսասիրական շահերի համար լարել են հայը հայու դեմ, եղբայրն եղբոր դեմ: Աղաչանյաններն են եղել, որ միշտ նույն ազգի հարազատների մեջ որոն են ցանել, 30 արծաթի փոխարեն մատնել և ուրացել իրենց Հայրենիքն ու ազգը, որը ծնունդ է տվել նրանց, և հանուն տիտր փառասիրությունների վաճառել ազգային սրբությաններն ու անունը: Ալժմապարզ է, որ Աղաչանյանը իր կանխավճար ստացել է իր կարդինալական ծիրանին՝ պառակտելու մեր ժողովուրդը պատմական այս օրերին, երբ ավելի քան երեք անհրաժեշտ է մեզ՝ հայ կաթոլիկներիս միանալ հայության մայր զանգվածին հետ, որից բաժանվել ենք մենք:

Կրոնն ու դավանանքը, ժողովուրդն ու Հայրենիքը երկու տարրեր հասկացողություններ են: Մեր ժողովրդի մեջ կարող են լինել և արդարներ կան տարրեր կրոնական, քաղաքական հայացքների տեր մարդիկ, քայլ նրանք չեն դափարում նույն ժողովուրդի զավակները լինելուց: Մենք հայ կաթոլիկ ենք դավանանքով, այսքան միայն, քայլ հայ ենք ազգությամբ, և ոչ թե «Փրանքաներ» կամ «յանկիններ»: Աղաչանյանը ընթանում է միշտադարյան մեթոդով, ինկվիզիցիայի գաղափարով, Զամշանների, Հասունյանների օրինակով: Քայլ անմտություն է կրկնել անց-

յալի՝ սխալները։ Եվ այդ բոլորը հանում ինչի՞... Հայ Առաքելական Մայր Եկեղեցին հին է և այնքան առաքելական, որքան Կաթոլիկ Եկեղեցին։ Հայ ժողովուրդը, մեր ժողովուրդը, ավելի հին, կուրսուրական ազգ է, քան կաթոլիկ մի որևէ ժողովուրդ։ Մրանք են պատմական փաստեր, Մենք՝ հայ կաթոլիկներս ենք բաժանվել Մայր Եկեղեցուց և Հայովթյան մեծամասնությունից։ Արմատը՝ Հայովթյունն է, իսկ մենք ճղակուտոր տերեներ ենք։ Այս է իրողովթյունը։ Ուրեմն ինչո՞ւմն է բանը, որ Աղաջանյանը, մաշած ճանապարհներով, կոչ է անում Հայովթյանը գնալ Վատիկան, մտնել պապի փարախը։ Գնացածներս ի՞նչ ենք հասկացել կամ շահել։ Մայր Եկեղեցում կարդացված ավետարանն ու քարոզված Քրիստոսը ինչո՞վ կ են տարբեր մյուս եկեղեցիների ավետարանից ու Քրիստոսից։ Հերի՞ք է որ մեր ժողովուրդին պատակտեն կրոնական սնամեջ և Հակաքրիստոնեական դոգմաներով։ Մեր գերապայծառները ցանկանում են մեզ դարձնել անորոշ տիպի մարդիկ, կրոնական կենվորներ, կրոնական կոսմոպոլիտներ։

Կար ժամանակ, երբ մեր կաթողիկե Հավատը շահագործում էին մեր գերապայծառները իրենց վերացական խոստումներով և գաղափարներով։ Մեր գլխով անցած դառն փորձառությունները մեր աշքերն ևս բաց արին և այլևս ոչ ոք մեզ խարել չի կարող Մենք այլևս կուրորեն շենք կարող ընդունել նորին Սրբազնության Հայունադավ գործունեությունը։ Մենք թույլ շենք տա, որ մեր անունից կարդինալը արյունուուն ձեռքեր սեղմի։ Միինունվոր զոհերի արյունը կրոպոքի մեր դեմ, եթե մենք լունք։

Ես կաթոլիկ Հովքորականների շատ խրժդրությունների ականատես եղած եմ և հիսաթափված։ Վերցնենք, օրինակ, մեր Խոտորչը հայ կաթոլիկ Համայնքո, որի հետ, գուցե, պատմաբաններից քշերն են ծանոթ։ Մեր այդ երկիրն Հ. Էփրիկյանն իր սինաշխարհիկ բառարանի էջ 200-ում «Պդտիկ Հոռմ» է կոչել, մի երկիր, որտեղ կաթոլիկների Համար ասում էին՝ «Մեզմայա», մեր ազգին այս եզրիտ կրոնական դաստիարակների պատճառով, «Փրանկ» անունն, ինչպես ուրիշ տեղեր, նույնպես մեզ մոտ ընդհանուր էր դարձել։ Սակայն հշենք, թե այս պատիկ Հոռմի հանդեպ մեծ Հոռմը ի՞նչ պաշտպանության միջոցներ ձեռք առավ Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ։ Պիոս 10-րդը Հակական կոտորածների ժամանակ լուր լուսաց, հանգիստ թողեց, որ կոտորվեն և կոտորածից մենք տարի հետո միայն ձեմ համար դիմեց Հինդենրուրդին և խնդրեց դադարեցնել կոտորածը,

և այդ այն ժամանակ, երբ Արևմտյան Հայաստանում ոչ մի հայ չէր մնացել, իսկ նրա դիմումին դիվանագիտական աշխարհում կարեռություն իսկ շտրվեց։ Իսկ այսօր ծիրանավորն ամբողջ Հայովթյանը կոչ է անում «գեպի Վատիկան»։ Այստեղ արժեն մեր Տարոնի առածը հիշելու թե՝ «Ազին կուկսր կապել չի կանա, գնացած ա հարսնետուն, հարսին կուկսն կապա»։

Դուզա գանք մասնավորից ընդհանուրին և շմունալու համար նորից կրկնենք հանրածանոթ փաստեր, որովհետև էին մեր առածը ասում է՝ «Անցուկս մոոցուկս կըլլաւ»։ 1908 թվին, երբ Աղանայում Հազարավոր Հայեր և մանուկներ կոտորվեցին, ծիրանավորի սիրած արևմտա-եկլիսական կառավարությունների դեռադիտակով հասպանները հանդիտակով հանգիստ դիտում էին կոտորածը որպես սիսալմամբ սպանված երկու անգլիական միսիոնարների համար որքան բողոքներ ներկայացրեց Անգլիան Թարձրագույն Դուանը, մինչև որ փոխարենը վարդատրվեց... Հիշում եմ՝ այդ օրերի մեր Վենետիկյան Միիթարյանների «Գեղումիւն» զետեղած էր էնվերի մեծածավալ լուսանկարը և նրա թյուրբերեն ինքնագիր ձեռագիրը...

Ինձ համար աստվածաբանորեն մի բան հանելով է մուսմ. քրիստոնեությունը և պատերազմը ի՞նչպես կարող են իրարու հետ Հաշտվել, սեր և խաղաղություն ավետարանողի հետևող ինչպես է վերլուծում այս խնդիրը, թիե ծիրանավորի փայլիքայած կառավարություններն այսօր կոտորում են անմեղ կորեացիներին և միաժամանակ նույն կառավարությունների ներկայացուցիչները քրիստոնեական քարոզ կարգում — դա մի՞թե քրիստոնեություն է, թիե կարդինալ Աղաջանյանը պատերազմ է հրահրում իրական կյանքում, իսկ եկեղեցում զդիստավորվում ծիսակատարության — մի՞թե դա քրիստոնեություն է։

Տողերիս գրով Հայրենական պատերազմի տարիներին ականատես եղել է գերմանական ֆաշիստների խժդություններին, նրանց ոտնձգություններին, ծեծին, բռնարարություններին, կողոպուտներին, սպանություններին — նրանք Հակաքրիստոնեական պախարակելի վերաբերմունք էին ցուց տալիս Սովետական բազմազգ ժողովուրդների նկատմամբ։

Այդ տարիներին մենք զարմանքով և ամոթով իմացանք, որ Վատիկանի կրոնավոր վարդապետները, ֆաշիստների հետ դինակած, մինչև Խարկով և Կուբակ քաղաքներն էին եկել։ Եվ սրանց մեջ գտնվում էր

Հայ կոթողիկ մի վարդապետ՝ տեր Պետրոս
Ալաջաջան (ախալցխացի) սպայի Հագուս-
տով։ Իսկ կապուշինները, իրենց տարագով,
տներում պատրագ էին անում և քարոզներ
խոսում ու պատերազմ հրահրում։ Այսօր
այլևս ինչո՞ւ զարմանալ Վատիկանի ավագ
կարդինալի արածների վրա։

Թերթիքից իմացանք նաև, որ Նորին Սըր-
բազնությունն էջմիածնի և Մայր Եկեղեցու
դեմ ևս դուրս է եկել պայքարի: Բայց այս
մեկ արարքը կաթոլիկ կղերի հասարակ
պատարագամատուցն է եղել դարերով:
Պատմության քիչ թե շատ տեղյակ մարդը
արդեն գիտե նախորդ դարերի անցքերը,
առանձնապես 16-րդ դարի կեսին կվոլված:
Սրբազն արդեն ամենօրյա տեր ողորմյա են
դարձած: Ուզում եմ հիշատակել հայ կաթո-
լիկ կղերականների ներհոգի վերաբերմուն-
քը դեպի Մայր Եկեղեցու հետևող հավա-
տացյալները:

Ես հիշում եմ մեր Խոտորջրում մի հայ առաքելական մարդու, որ գործով եկել էր Խոտորջու և պատահական մահացավ։ Էջմիածնի պատկանող հայն իրավունք չուներ կաթողիկ հայի գերեզմանոցը թաղվելու։ Տեղական կաթողիկ վարդապետները թույլ շտվին նրան թաղելու գերեզմանոցում, մինչեւ որ երիտասարդներից մի քանիսը դուրս եկան, կովեցին և դատապարտեցին կղերականներին այս տմարդի վերաբերմունքի համար, և ննջեցյալին տարան թաղեցին կաթողիկ գերեզմանոցում։ «ՃՈ՞՛՛ ասեմ կամ զ՞՞՛՛ խոստովանիմ»։ Սրանք ո՞ւմ ցանած ատելովթյան սերմերն են, այս ո՞ւմ դատիարակությունն է. ո՞ւ ապաքե՞՞ Հոռմի Խնչո՞ւ այժմ զարմանալ Հոռմի ավագ կարդինալի էջմիածնի նկատմամբ ցույց տված վերաբերմունքի համար, մի՞թե նորություն է։ Մի՞թե մեզ հայտնի շեն մեր հայ կաթողիկ կղերականներից ոմանց հայրենադավարարժները։ Մի՞թե չփատենք և չտեսա՞նք Հայր Ներսես Ակինյանի քանասիրական-մատենագրական դիմակով կաթողիկություն տարդածելու փորձերը Մայր Հայրենիքում։ Հիշում եմ ակամա Միքայել Նալբանդյանի այն խոսքը, թե՝ «Հին Միսիթարյանները կաթողիկությունն դիմակ արած, հայոց գրականություն էին տարածում, իսկ մեր օրերի Միսիթարյանները գրականությունը դիմակ արած, կաթողիկությունն են տարածում...»։

Մենք գիտենք, որ ծիրանավորի ամեն մեկը կրոնական շարժման տակ քաղաքականությունն է խոսողը։ Դարերի փորձառությունը շատ բան է սովորեցրել հայ ժողո-

վըրդին, այնպես որ, ծիրանավորի արած
բոլոր շարժումներն ավելորդ են, բոլոր բա-
նակութիվներն՝ օդային, չկան այլևս նրան
հավատացող միամիտներ։ Լավ չէ՞ր լինի,
որ այդ բոլոր բաներից հրաժարվեր կարդի-
նալը և, որպես կրոնականի, խաղաղասի-
րական և մարդասիրական գործերով պա-
րապեր, և պատմության մեջ լիովոններ այն-
պիսի սկզբեր, որոնց համար այսօր աշ-
խարհի ամեն կողմից թուք ու մուր են թափ-
մում։

Հայ կոթողիկ կղերականի համար ինչքան
ամոթաբեր էր հայ առափելական կրոնավոր
եղբայրներից մեկի ծիրանավորին ուղղած
պատասխան գրվածքում բերած խոսքը. «Ուն
բիդի դին բիդի», ալլուրն վերջացավ հա-
վատը վերջացավ: Գործո հասել է այնտեղ,
որ կաթոլիկ աստվածաբանությունն ալլուրի
կապված է արդեն: Լավ է՞՞ մինի, որ հե-
տադարձ մի ակնարկ ձգեինք պատմության
անցքերի վրա: Մեզ հայտնի է, որ այդպիսի
պայքարները նոր շեն մեր իրականության
մեջ: Կաթոլիկ կղերի բոլոր շանքերը, գոր-
վածքները ի՞նչ արդյունք տվին, քանի՞ հո-
գի միացան Հռոմի հետ: Ընդհակառակը,
մեզանից խմբերով գնացին դեպի եղմիա-
ծին, գնացին շատ մեծ և ուսալ մարդիկ,
ինչպիսիք են՝ Օրմանլանները, Գալֆայան
եղբայրները, Այլվազովսկինները, Սալաթյան-
ները, իսկ մենք մի օրինակ ունեցանք գեթ
Հայ Կաթոլիկ եկեղեցվո մեջ էջմիածնից
վերադարձած մի եպիսկոպոս կամ մի
վարդապետ, թեկուց մի հասարակ քահանա:

Կարդինալ Աղաջանյանը իր բոլոր շրջապերականների մեջ ճգնում է նկարագրել Հայության անցյալը որպես մի և կաթողիկե, մանավանդ 5-րդ դարը, սակայն այդ դարու արյունոտ անցքերի մեջ Հազկերոտի ոտնձգությունների դեմ ապստամբած ժողովուրդը ինչո՞ւ չի դիմել Հոռոմին, մի թուղթ էլ ինչո՞ւ չի գրել Պետրոսի աթոռին, խորհուրդը չի հարցրել։ Զկա այդպիսի բան։ Պատմական փաստերը չպիտի կեղծել։ Իսկ պատմական փաստերը մեզ ասում են, որ մինչև 5-րդ դարը Համարյա եկեղեցիների մեջ մեծ և պղտիկ չկար, բոլորն էլ Ընդհանրական Եկեղեցի էին և իրարու հետ հաշտ և քարեկամական Հարաբերության մեջ։ Սակայն հետափայում նեղմիտ կղերականների եսասիրությունը և նորանոր վարդապետությունների առաջ գալը պատճառ դարձան պառակտման և իրար դեմ պարզաբնոււ հշիանական հիվանդություն քաղաքանություն վարեցին առանձնապիս Հոռոմի պատերը։

Այստեղ տեղին է հիշել Տիրոջ հանդիմանական խոսքը մարդկանց՝ նսայի մարդարեի բերանով. Ըկասն ձեր անուն իմ հանապազ հայոյի ի մէջ հեթանոսաց (նսայի, ՄԲ. 5):

Թարձրաստիման ծիրանավոր Աղաջանյանը փոխանակ անցյալի մեղքերը քավելու, նախկին մեղքերի վրա նոր մեղքեր է ավելացնում: Մենք չգիտենք, ծիրանավորին արդյոք հայտնի՞ են նսայի մարգարեի հետեւյալ խոսքերը. «Եւ ձուկեցեն զսուերս իրեանց ի խոփս, եւ զսուինս իրեանց ի մանգաղս. ոչ առնուցու ազգի յազգի վերայ սուր, և ոչ ևս ոսանիցին տալ պատերազմ» (նսայի, Բ. 4): Ի՞նչ է կարծում նա, ո՞մ համար են ասված այս խոսքերը, ո՞վեր սուրերը խոփ պիտի տարձնեն և սվինները մանգաղ, ազգերը իրարու հանդեպ սուր շպիտի բարձրացնեն և պատերազմ շպիտի անեն:

Որպես հավատացյալ մարդ, ես սարսափելով մտածում եմ՝ թե Աստծու արդարդատաստանի առաջ ի՞նչ պիտի պատասխանե ծիրանավորը, մի՛թե հաղարավոր մանուկների և մայրերի աղաղակը շպիտի բարձրանա երկինք:

Պարզ է, որ Աղաջանյաններին և նմաններին չի հաջողվի հասնել իրենց մութ նպատակներին: Արտասահմանի մեր արենակից հայ եղբայրները շատ լավ են հասկացել, որ մեր օրերի բարված միշագգային իրադրության պատճառը Աղաջանյանների երկըրպագած ուզմամոլների ագրեսիվ քաղաքականությունն է: Դրա համար էլ արտասահմանի ողջ հայությունը, ինչպես Մայր Հայրենիքի ամրող ժողովուրդը, վրդովմունքով են նայում Աղաջանյանի գործունեության վրա: Նրանց արդարացի վրդովմունքը բաժանում է նաև հայ կաթոլիկ հասարակությանը, որն իր բոլոր սրտով դատապարտում է Աղաջանյանին և նրա հակահայ-

կական խմբին տուն տվող Վատիկանին: Մենք սպասում էինք, որ Աղաջանյանի բերնից, իրեն եկեղեցու սպասավորի բերնից, գնչեն լոկ սիրո, համերաշխության խոսքեր և ո՛չ թե պատերազմի հրձիգների արյունն ու խոլերան: Աղաջանյանը խայտառակել է ո՛չ միայն իրեն, այլ նաև Կաթողիկ եկեղեցին, մեր սուրբ հավատը՝ Ըկասն ձեր անուն իմ հանապազ հայոյոյից:

Մենք՝ հայ կաթոլիկներս պահանջում ենք, որ սրանից հետո Աղաջանյանը հայ կաթոլիկ հասարակության անունով հայտարարություն շանի: Արտասահմանում ամեն մի հայ, լինի նա կաթոլիկ կամ ոչ, համակրանքով է նայում իր Սովետական Հայաստանին, և առանց դավանացի խտրության, հակառակ Աղաջանյանների, էլ ավելի համախմբվում իր Հայրենիքի և իր Մայր Եկեղեցու շուրջ: Խզուր է ճգնում և իր կաշվից դուրս գալիս Աղաջանյանը հակառակ պնդելու համար: Սկիտուքով խայտառակարար տապալված պետք է համարել հակահայկական պրոպագանդան, որը մղում է Աղաջանյանը:

Անե՛ծք այն մութ ուժերին, որոնք այս ճակատագրական ժամանակաշրջանում հայ ժողովրդի մեջ անհամերաշխություն, ատելություն են քարոզում:

Կասավները արդարանալիք չունեն ո՛չ իրենց ժողովրդի առաջ, ո՛չ էլ պատմության դատաստանի առաջ:

Կարդինալ Աղաջանյանը հաշիվ ունի տալիք հետագա հայ աերունդներին, և հոգի ունի տալիք Աստծուն: Հայ կաթողիկե հայրենասեր հասարակությունը իր միջից, իր թարախակալած վերքի, կտրում դուրս է զցում Աղաջանյաններին. «Անդ եղիցի լալ և կրծել ատամանց...»:

Ահա՝ տիսուր վախճանը ազգադավ Վասակների:

